



74. ԷՐԿՈՒ ԳՈՂ

Տերտեր մե կէրթա Արճշու կողմեր ժողովք էնելու:

Գիշեր պառվու մե խոնախ կէղնի, աչք կընկնա պառվու իծվան:
Յառջի աղոթըրնին ղպառվու վեց էծ լե կը գողնա, կը տանե վան,
կը ծախե: Տիրացուն գիմնա ղտերտրոջ գողութեն, ձեն շէնե, հարի
տերտեր կը դառնա գիկա, կը հասնի ծննդյան տոնին:

Տոնի գիշեր ժողովուրդ լիք կէղնի ժամու մեջ: Տիրացուն մեկ
դասեն՝ «Ուրախացի՛ր, սրբուհի» շարակնի տեղակ կերգե.

«Ուրախացի՛ր, գալլ երեց,
Այն գողունի վեց այծիք՝
Զոր ի յԱրճէշ գողացար,
Տարեալ ի վան ծախեցիր,
Տէր Աստուած, հարցըն մերո՞ց...»:

«Գող՝ սիրտն ի դող». տերտրոջ խուղում կը կոտրի, կը հարմար-
ցու՝ էն մեկել դասեն կերգե.

«Տո՛, տիրացու սեերես,
Զըլնի մարդու բան ասես,
Կեսը ընձի, կեսը քեզ,
Տէր Աստուած, հարցըն մերո՞ց...»:

Մըջ ժամուն՝ պառվներ ուրանց սիրտ կը տփեն ու կըսեն.

— Ո՛ւյ, մե՛ղա աստծու, մե՛ղա աստծու, ու վիռա-վիռա կը
կղեն ու դելնեն, խաչ կը հանեն:

Տերտեր էլ կոնե՛ր ձեն հաներ: Ժամուց չիլան, ինքն ու տիրա-
ցուն գողցած իծվըներու փարեն բաժնեցին վըր չիրարու...

